

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան 12 Ժր.

Վեցամսեայ 6 Ժր.

ԱՐՏԱՍՍԱԶՄԱՆ

Երկու քիւր մեկ ծրարով

Տարեկան . . . 14 Ժր.

Վեցամսեայ . . . 7 Ժր.


ԱՍԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօրս

Վեցամսեայ 1.50 "

ԿԱՆԻԻԿ

Ծանոցման օրը
20 սեպտեմբեր



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՓԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍՏԻ

Rédaction du journal

fr. vounk

VARNA (bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

Кравунк

ВАРНА

Գրութորները եւս չեն տրուիր

ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՏԸ
ՔԱՂԱՔԻԻԹ ՍԵՆՍԵՐԻԿԱ
ԱՌՋԵԻ

Տիար տօք. Գաբրիէլեանի Հայկական քաղաքացիական պատերազմի շուրջ գրութիւնը որուն մասին գրուեցաւ մեր նախորդ թիւի մէջ, շատ մը հրահանգիչ դասեր և խորհրդածութիւններ կը պարունակէ. Երբեմն կէտերու մէջ որչափ ալ մեր կարծիքը մի քիչ տարբեր ըլլայ, յարգելի Տօքթօրին երկը իր ընդհանուր գծերով յանձնարարելի գտած ենք ամէն հայու, նկատելով մանաւանդ թէ նա անկեղծ ու խոհուն հայրենասէր մը ըլլալով, իր ինչ ինչ յատկութիւններով լաւ ուսումնասիրած է մեր ազգային գաւի բոլոր փուլերը, ի մասնաւորի այդ գրքին Ը գլուխը մենք խիստ հրահանգիչ գտնելով, օգտակար համարեցինք այդ մասը նոյնութեամբ մեր ընթերցողաց ուշադրութեանը ընծայել այս սիւնակներով:

Ը.

Դիտմամբ քիչ մը մանրակալութեամբ նկարագրելի յուզմունքներ այն բազմափուլ հոլովոյթը զոր համալսարհական կարծիքը մեր գաւի վերաբերութեամբ կրած է վերջին քառորդ դարու ընթացքին: Հայաստանի մէջ քիչերը երբեք իմացած են թէ քաղաքակիրթ աշխարհի 1895 ի հակաթուրք գրգռումն ո՞րքան ընդհանուր էր եւ ո՞րքան անգուսպ իր արատաշատութեանը մէջ՝ ցորչափ այդ արատաշատութիւնը Մամուլի բերաններէն, բեմերէն ու խորհրդարաններէն կ'արձակուէին: Սակայն չկար մեզի համար բան մը այնքան բացէ ի բաց ակներեւ որքան այն իրողութիւնը թէ բարոյական կարգի բոլոր այդ ճնշումները բնաւ չպիտի գօրէին ի հասնութիւնն ամէն զՍուլթանն որ հայկական բարեկարգութեանց գործադրութիւնը եւրոպական վերահսկողութեան ենթարկէր: Զինեալ ուժի, թնդանօթներու կոթորակներ արձակուած արտայայտութիւններու առջեւ միայն պիտի զիջանէր Ապարիտ Համիտ: Ուստի անկախ բոլոր սպառնալից որոտումներէն սիւն ի թունդ ունկնդրեց՝ միշտ յուսալով թէ փոթորիկը պիտի անցնէր անանց:

Իր բռնակալական մենաշնորհներէն նշանակեց մը կորզելու:

Ո՞րիչ՝ եւ անկի անսոր՝ իրողութիւն մը յայտնի էր սկիզբէն. այն թէ. Արեւմտեայ այս բարոյական ու գիւտնադիտական յարձակումներն ոչ միայն պիտի վերադառնային նոր պատակէն այլ եւ ամենապարտաւորի վիճակ մը պիտի ստեղծէին Արեւելքի մէջ եթէ զինուորական ուժով յուղղութիւն չը բերուէր Համիտ: Այնքան յոխորտանքի եւ արհամարտ քննադատութիւններու անսպաս հասանքը կուլ տուած ըլլալէ վերջը, Սուլթանը իր զսպալ սրամտութեան բոլոր թոյնը պիտի ժայթքէր եւրոպայի երեսին՝ չլքալազելով կատաղութեամբ ճաշելով ինչ ժողովուրդը:

Նախագահ Բուզուքի ի սոսկին անցեալ օր միջազգային արդարութեան վրայ՝ կըսէր, «եթէ մարդ մը բան մը բռն ուրիշ մարդու մը, որքան աւելի զօրաւոր ըլլայ՝ այս ուրիշ մարդը, այնքան նուազ հարկ պիտի համարի պատասխանել: Անկի հուզելի խօսքի միջեւ որ գործելու ժամանակը դոյ, եւ այն ատեն անկի կը գործէ անյողողող որոշմամբ: Ամենէն արհամարի զիրքը որ կրնայ երեւակայութիւն՝ այն մարդուն է որ բարձրագոյն խօսած ըլլալէ յետոյ՝ տատամտած ընթացք մը կը բռնէ: Ու ճիշդ նոյն բանը պիտի ըսեմ ապագայի վարձմունքին համար»:

Եւ մենք ճիշդ այդ բանը ըսինք Անգլիոյ ընթացքին համար, Հասարակութիւնը, կըրեական հեղինակութիւնները, ազնուականք, նոյն ինքն նախարարապետ Սալիպի փոփոխութեանով յանդիմանեցին ու երկար դիմեցողցին Սուլթանը, կործանուած գուշակեցին անոր կայսրութեան, եւ յետոյ... տեղերին նստան, առնելով «ամենէն արհամարի զիրքը որ կրնայ երեւակայութիւն»:

Սակայն «արհամարի» մակդիրը չորակեր այդ գիրքը: Անգլիա, ի պատիւ իր արհամարի ընթացքին ծանրապէս տուժեց իր վարկէն, սակայն որովհետեւ չեղանք զբանել կատարած իրքին ձեռքը այն հայ ժողովուրդը՝ որուն պաշտպանութիւնը զաշխարհի յանձն առած էր, Ոսթոն մը գործած եղաւ:

Սակայն Անգլիոյ ոճիւրը ունի իր մեղմացուցիչ պարագաները եւ թեւեւ կ'երեւնայ անոր թեր ուղեակալին: Անգլիա տրամադիր էր զինուորական գործողութեան գիմնելու եթէ իրեն զէմ չի գտնէր զԲուսիա: Մեծագոյն ոճրագործը Ռուսոյ կառավարութիւնն էր, քրիստոնեայ ցեղերու պաշտպանը ի վերելու...:

Հոս չպիտի յամենամ զաշխարհում Տէրութեանց իւրաքանչիւրին պատասխանատուութիւնները պարզելու եւ ոճրին որքանութիւնը չափելու: Թրքական վարագութեանց զէմ քաղաքակիրթ ժողովուրդը յուզմունքին երկար նկարագրութիւնը ուրիշ նըպատակով ըրի, ինչպէս զաշխարհին իր անունի ալ հանրային յուզմունքը մեզի շատ սուղի նստած են: Եւրոպայի հանդէպ մեր ազգին դիրքը արմատական սխալի մը վրայ խարխուռած է սկիզբէն ի վեր. այդ սխալին աղբիւրընքած են յուսալաւութիւնը հիսթորիաները եւ մեծամեծ ազէտք: Վերջին քառորդ դարու թանկ փորձառութիւնը պէտք է մեզ բուժէ այդ մոլորութեան: Տեսնենք հիմա այս մասին իրողութեանց զարմ մեր ազգին համար: Նախ եւ առաջ օտ կարեւոր իրողութիւնը ուշադրութեան առնելու ենք թէ հանրային զգացումը, վաղանցիկ թէ քիչ շատ տեւական, տարբեր բան է, ու գործադիր իշխանութիւնը տարբեր: Սահմանադրական ազգերու մէջ կարծիքը ազգացութիւնն ունի, երեսփոխանական մարմինը կրնայ ժողովուրդային յուզմունքներն արտայայտութիւններ կրել, սակայն եւ այնպէս կառավարական մեքենաւորութեան քաղ ու կնճռոտ է, հանրային զգացումը գործնական քաղաքականութեան փոխուելու համար խոչոր անշլուկաւ մը կտրել անցնելու է, եւ կրճայ շատ մը կէտերու վրայ խոչընդոտել կամ կասել: Ասկիւ երկրի մը ներքին գործերուն համար իսկ ճշմարիտ է, բայց եւս աւելի միջազգային քաղաքականութեան ասպարէզին վրայ ուր այլ եւ այլ ազգաց հաշիւներն ու շտհերը իրարու կը բաղիին:

Եւ հոս է որ մեր սխալին անագնութիւնը երեւան կըլլէ: Տէրութիւն մը որքան հզօր եւ ազգեցիկ ըլլայ, չէ կարող իր ժողովուրդին ամեն ուզածն ընել, եւ մասնաւորապէս փափուկ խնդիր: Տէրութեանց միջամտութիւնը իրարու գործերուն մէջ, Հայկական խնդրոյն բարեօք կարգադրութիւնը այս կամ այն պետութեան կամքէն կախեալ չէ, ընդհանուր համաձայնութիւն հարկաւոր է, կամ թէ պետութեանց մէջէն գերակշիւ զօրութիւն ունեցող խեղճ մը՝ յաղթելով հակառակօք Տէրութեանց արգելքներուն՝ իր պատշտ համարած լուծումը պէտք է աւայ անօր: Փարձելը ցոյց տուած են եւ մեր պարագային նորէն ցոյց տուին թէ այդպիսի համաձայն խաղաղութեան մը իրականացումը որպիսի անյաղթելի արգելքներու կը հանդիպի սովորաբար:

(Շարունակելի)

Չը վճարող բաժանորդներու թիւը Յունիս 30 ին պիտի դադարեցնենք: Թող փութան վճարել:

ՍՐԱԲԻԱ

ԱՊՍՏԱՄԱՐՈՒԹԵԱՆ ՏԱՐԱՄՈՒՐԸ

Արարական խնդիրը կայ և օր ըստ օրէ փափուկ կերպարանք մը կ'ստանայ. ապստամբութիւնը որ կ'իշխէ բովանդակ եւ մէնի մէջ, ճարակած է նաեւ իսլամի սուրբ երկրին՝ Հիճազի մէջ. Մէքքէի գրաւումը այլեւս մէկ երկու շաբթուան գործ է միայն: Մահմուտ Եահեան որ նոր խալիֆէ ճանչցուած է իսլամ աշխարհէն, պիտի գրաւէ ընդհուպ սրբազան վայրերը, և Պալատի Սուլթանին կրօնական գերիշխանութիւնը անհետ պիտի ըլլայ: Արդէն Հոսէյտայի եւ Ալեքսի մէջ եւ մէնի ապստամբներու պետին հրամանով կոխուած գրամներ կը շարժուին: Այս գրամները, որոնցմէ մի քանի հատ բերած են շատ մը ճամբարներ, սա մականգրութիւնը կը կրեն «Հաւատացեալներուն Պետը, Մէքքէի Մահմուտ Եահեան, որդի Համիտէտտինի»: Ամէն տեղ ուր սկսած են կռիւ մղել, թրքական զօրագունքերը նահանջելու ստիպուած են, ոչ այնչափ Արարներէն յաղթուելուն, որչափ փոքր Ասիոյ զինուորներուն իրենց եղբայրներու վրայ զէնք վերցնելու մարտունի հետեւանքով:

Ազգային շարժումը ամենուրեք կ'ընդարձակի եւ Ապարիտ Համիտն ու իր կառավարութիւնը մտահոգութեան կենթարկէ: Ասորիքի Պաղեստինի և Ռիլազեքի սուրիական զօրագունքերը նշանի մը կը սպասեն խնդրելու համար թուրք սպաններէն, որպէս զի բուն թուրքիոյ ճամբան բռնեն: Եւ թուրք կառավարիչները՝ իրական իշխանութեան զուրկ մնալով, պիտի պարտաւորուին անոնց հետեւելու: Պալատի հասած տեղեկագրերուն նայելով Սուլթանը հասկցած է որ հիմակ միմիայն Ապարիտի և Ռիլազեքիոյ պահեստները տրամադիր են կռուելու, և ասոնց թիւը անբաւական է ապստամբներ:

րուն գէտ . Այս վերջիններուն հրամանատարները յաւ ընտանիքներէ առնուած և Եւրոպացիներու հետ յաճախակի շփուելուն հետեւանքով կրթութեամբ արար սպաններ են :

Իպն-Սաուատ, որ նէճէտի էմիրն է և վահագլթներու պետը ազգային նոր տէրութեան յարելով, բովանդակ կեդրոնական Արաբիան հետը բերած եղաւ : Ասորիքը Պաղեստինը եւ Իսրայէլ գետքը արաբ վահագլթի մը գորշակին տակ համախառնելով, իրենց ինքնավարութիւնը պահել պիտի ուզեն, և միայն կրօնապէս կախում պիտի ունենան Մէքքէի խալիֆէէն : Այս վերջինը իր աշխարհական իշխանութիւնը միայն Իսթքէի և Հիւճազի մէջ պիտի վարէ : Գրեթէ ստոյգ է որ տէրութիւնները իբր պարզ հանգիստեաներ պիտի ըլլան միայն այս փոփոխութեան եթէ չուզեն միջամտել : Ինչ որ շատ հաւանական չէ :

Գերմանիան թուրքիոյ հետ է, բայց Անգլիան և Միացեալ Նահանգները աւելի արաբական շարժման կողմն են, և Ռուսիան կրնայ ծափահարել միայն իրաց նոր կացութիւնը, տալով Արաբներուն իրենց անկախութիւնը որ վերջապէս պիտի կասեցնէ Անգլիոյ յառաջնորդութիւնը :

Այսօր ամէն մարդ գիտէ թէ Արաբիոյ կանգնումը երկար ատենէ ի վեր պատրաստուած է բուն իսկ նոյն ցեղի ժողովուրդին, և նէմէնի, Հիւճազի և Վատի Շէրանի վրանաբնակ և միայն շարժողիչներէն : Համաձայնութիւնը հաստատուած էր Եփրատի բնակիչներուն հետ, հիմնելու համար արաբական կայսրութիւն մը եւ թովափելու գարշելի լուծը թուրքերուն, որոնց ինքնակոչ վարչութիւնը բան մը չէր ներքէր բայց եթէ շարք մը կեղեքումներ, որոնք երթալով անտանելի կը դառնային մէն մի կուսակալի ժամանումին : Տուրքերու հասոյթը, իւրաքանչիւր կառավարչի քմաց համաձայն ըստ կամս, գանձուելով Պօլիս կը հասնէր այնքան պակասած վիճակի մէջ, որ կեդրոնական կառավարութիւնը միշտ ժողովուրդին դէմ լուրջ միջոցներ հրամայէ : չէր դադարէր արդէն միանգամ և նոյն իսկ շատ անգամ տրուած ստակ մը կըրկին հաւաքել տալու համար :

Ապտամբութիւնը, որոշուած սկզբունքով, աւելի ուշ պէտք էր պայթիլ բայց այլեւս եւրոպիոյ քանի մը տէրութիւններուն ինչպէս Գերմանիոյ և Անգլիոյ այս կողմերուն մասին նուիրած ուշադրութիւնը և անկէ առաջ եկած դարձուածքները ընդ երկար մտածել տուին ազգային կուսակցութեան պարագլուխներուն 25-մի որքեփրատի թեւակրութեան Ե

մէնիմէն Կալիֆ Գաւման վրայ կը խօսուէր : Գործէն մօտաւոր վրտանդ մը նախատեսելով, անկախութեան ծանօթ պետերը, ապահովուած Անգլիոյ լուսեայն գորավիգ կանգնելէն, որոշում տուին խալիֆէ ընտրելու Շէրիֆ Մահմուտ Եահան, որդի Համիտ—էտ—Տիւնի : Մահմուտի հայրը հաւատարիմ միւսլիմաններու վրայ ունեցած ազդեցութեամբ, պատրաստած էր սարահարթերու խիզախ և ասպետական բնակչութիւնը : Շէյխին և Անգլիոյ հեղափոխութեան հակադրութեան ներքեւ Գաւմէն էր որ զէնք ու ռազմավար մը : Կալիֆ Մահմուտի մէջ, թոյլ տալով Եահանի կուսակցիներուն յանկարծ կռուի վաղելու :

Վերակազմեալ արաբ ազգայնութեան վրայ թեւակրութեան մը գաղափարէն հրաժարելով Հիւճազ կառավարութիւնը, իր գործունէութիւնը անտեսական հողին մէջ ցուցնելու վրայ միայն կը խորհէ : Սպասենք ուրեմն տարբեր պայքարի մը Գերմանիոյ հետ, որ Եփրատի աւազանին մէջ առեւտուրը մեծ նաշնորհ ընելու այնչափ մեծ կարեւորութիւն կուտայ, նոր պետութիւնը շատ թախանձաք պիտի ընդունի այս երկու մըրցակից տէրութիւններէն : Մինչեւ հիմա Անգլիացիք յաջողած են շահելու արաբական բարեկամութիւնը, մինչդեռ Գերմանիան իր յոյսը կրնայ դնել միայն Ապալիւ Համիտի բարեկամութեան վրայ, որուն թագաւորութիւնը Արեւելքի մէջ ընդհուպ դժպէսի . . . յիշատակ մը միայն պիտի ըլլայ :

Համառի Ռեկու
(Գուռիէ Էօսթէէն)

Ռ Ո Ն Ս Ա Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի
Կ Է Պ Ք Ե Ր Ը

Նախիջևանի զէպերու մասին հետեւալ տեղեկութիւնները կը քաղենք այլեւայլ թերթերէ ու թղթակցութիւններէ . . .

Նախիջևանէ երկու վեհա հեռուն Արապատ անունով փոքրիկ գիւղ մը կը գտնուի, որուն բնակչութիւնը բոլորովին հայերէ կը բաղկանայ : Մայիս 19 ին իրիկուան ժամը 9 ին, Արապատի 4 գործաւորներ տուն դառնալու ատեն կը տեսնեն թէ երկու թաթարներ կը սպաննեն ուրիշ թաթար մը : Հայերը վախնալով աճապարանք դէպի գիւղ կը յառաջանան : Սպանութեան ատիւ յարուցուած աղմուկէն մերձակայ արտերը գտնուող թաթարները հոն կը վազեն, և տեսնելով որ հայերը աճապարանք կը հեռանան, անոնք լուր կը տարածեն Նախիջևան քաղաքին մէջ թէ Հայեր թաթար մը սպաննած են : Նոյն վկայութիւնը կուտան օստիկանութեան ալ : ասոր վրայ այն չորս հայերը կը ձերբակալուին :

Գործը ասով չը վերջանար : Թաթարները որ Նախիջևանի եւ ջրակտներու բնակչութեան 100 ին 60 ը կը կազմէին, կը սկսին Հայոց դէմ սոսկալի բրբռականութիւնը եւ հետեւեալ օրը Արապատի մը, եւ ուրիշ հայ մը գանակի հարուածներով կը սպաննեն : Այս ոճիրները անպատիժ կը մնան, և տեղական կառավարութիւնը բնաւ չը միջամտեր թաթարներուն մէջ աճող գրգռութիւնները մեղմելու համար : անոնք կառավարութեան անշարժութիւնէն քաջալիքուած կը պատրաստուին խմբովին կոտ լաւ ընելու :

Հայերը այդ սպանութիւններէն ահաբեկուած և թաթարներէն յարձակում կրելու վախէն իրենց խառնութիւնը կը գոցեն : Քաղաքապետը Բահիմ իման Նախիջևանը, քանի մը իսլամ ազգայնիկ անձերու ընկերակցութեամբ, կապահովէ Հայերը թէ վախնալու բան մը չկայ, որովհետեւ նախագահական ամէն միջոցներ ձեռք առնուած են : Հայերը այս խօսքերուն վստահանալով, խառնութիւնը կը բանան մայիս 25 ին : Բայց նոյն միջոցին իսկ թաթարներու թաղէն զէնքեր մը պայթումով կոտորածի նշանը կը արօր : Իսլամ խուժանը Պէրսիան հրացաններով, շրջահարներով և նախադասներով զինուած կը յարձակին հայերուն վրայ և կը ջարդեն շուկայի բոլոր հայերը : Ասանցմէ մէկ քանին, ի մէջ այլոց կարապետ Աղամանը եւ իմաթեան հրապարակը ողջ ողջ կայուէին : Բոլոր Հայոց խառնութիւնը ամբողջովին կը կողոպտուին : Նաեւ բոլոր շրջակայ գիւղերը նոյն վիճակին կը մատնուին : Ողջ մնացողները առանց ապաստանի եւ ապրուստի կը մընան : Վնասը քանի մը միլիոն ռուպլի կը հասնի :

Նախիջևանի ողբալի լուրերը Տրփիս հասնելուն, Հայոց առաջնորդը կը ներկայանայ Կովկասի փոխարքայ Վարանցով—Տաշքով կոմսին, որ կը բաւականապէս ըսելով թէ ամէն միջոց ձեռք առնուած է : Բայց կոտորածը եւ հրդեհումը աւելի մեծ չափերով կրկին շարունակուեցան : Ինչ որ կապացուցանէ հետեւեալ հեռագիրը Առաջնորդին տրուած Նախիջևանէն Մայիս 25 թուականաւ :

«Երէկ ստացայ Ձեր հեռագիրը : Երէկ հեռագրեցի փոխարքային թէ Հազարափրկի մասունքները թաթարները տարած են : Կը խնդրեմ հաղորդեցէք փոխարքային թէ քաջ Շահմահմուտցիներու խումբ մը ցըրուեց յափշտակչները, մասունքները ետ առաւ և Եարմաքի անպաշտպան բնակիչները Շահմահմուտ բերաւ : Այս երրորդ օրն է որ կը քախանձեմ կառավարութեան զառնելու հարցը : Կը կրկնեմ ձեր պատիւը : Բայց նոյն իսկ այսօր, վաղտ մը զօրք հասնելէ յետոյ ալ, հանգիստ կ'ընդունուի : Կը կրկնեմ թաթարները զիսմամբ իրենց խառնութիւնն ալ կը պարպեն հայերը կողոպտեցին ըսելու համար : Թէեւ ոչ մէկ հայ չը կրնար տունէն դուրս ելլել : Խմբաքի խումբ, Տէրպապայի անցքին, Տարալակի մէջ Հայոց վիճակը ծայրայեղօրէն ծանր է : Այս վայրկեանիս կը յարձակին կարմիր—Վանքի վրայ : Զօրաց վաշտը կը մերժէ վսակցի իսկ զգեցողութիւնը օգնութեան հասնիլ : »

Կարապետ Վարդ :

Ազաւ-Բեյ Նիսանուոր համակէ մը հետեւեալը կ'ըսանայ :

«70-80 չափ զինուած հայ կործաններ, տեսնելով որ կառավարութեան զօրքերը անբաւական են թրքական յարձակումները զսպելու, կերթան հայ գեղերը պաշտպանելու :

«Խուճըր, լսելով թէ թուրքերը Հազարափրկի շին մասունքը տարեր են և արդէն կարմիր վանքը պաշարեր, վրայ կը հասնի, վանքին ու շրջակայ գեղերուն օգնութեան :

«Թուրքերը թոյլ զիմադրութիւն մը կ'ընեն : Խուճըր թուրքերն ու քիւրտերը երկու կրակի մէջ կ'անէ ու կը ջարդէ և կը փախցնէ ամէնքն ալ : Խելով անոնցմէ հաւաքած աւարներն ու Հազարափրկի մասունքը : »

Ահա բարիչ հեռագիր մը եւս Նախիջևանէն Մայիս 25 ին քաշուած :

«Այս հինգերորդ օրն է որ թաթարները հայերը կը ջարդեն, ասոնց ինչքերը կը կողոպտեն, տուններն և խառնութիւններն թալուելով կրակի կուտան : Սակայն, Թաթար քաղաքապետները Ալիին զօրակը պարզած և գլուխներ օսմանցու ֆէս գրած Հայոց զէմ «ճէհա» (սուրբ պատերազմ, կը հռչակեն : Զահրուն թիւր խիստ մեծ է : Մէկը շկայ մեծահաները եւ վերաւորները ժողովուրդ : Եունները լքեալ, զիւղիները կը յօշոտեն : Այս կոտորածը գերազանցեց հին մոնղոլական ջարդերը : Հասան 450 զինուորներ որոնք կը յայտարարեն թէ անկարող են կոտորածին վերջ տալու : Գիւղերուն մէջ բաւական եկեղեցիներ թալանի եւ սրբապղծութեան ենթարկուեցան : Ամէն կողմ հրդեհը աւերման գործը կ'ամբողջանէ : Սարսափը անհկարաւ գրեթէ է : Անմիջական օգնութիւն հասցուցէք, որովհետեւ ջարդէն, թալանէն և հրդեհէն յետոյ սովը կը ըսպանայ : »

Սարսափը Նախիջևանի գաւառէն անդին ալ տարածուած է : Շառու—Տառալիկազ և Զանքլար կողմող լեռնային գաւառներուն մէջ, որ իսլամները նոյնպէս մեծամասնութիւն կը կազմեն և վայրենաբարոյ են, աւազակութիւններով միշտ ժողովուրդը սարսափ տակ կը պահեն : ստիպած են իմաթալ գիւղին հալիւր որ իսլամութիւնը ընդունին : Գիւղին քահանան բռնազատուած է ժողայի զգեստ հագնել և տարուած է մերձակայ գիւղը իսլամական ձէսը կատարելու :

Ուրիշ հեռագիր մը կ'ըսանէ թէ Պարսկաստանէն Քիւրտեր սահմանը անցած են օգնելու համար իրենց կրօնակիցներուն : Ահա թէ ինչ կը գրեն այս մասին (Կովկաս) թերթին :

«Իւրեքսերը սահմանը անցած են, և թաթարներն օգնութիւն տաւնալով, կը սպաննեն երեւան—ձուլֆայի երկաթուղիին եւ Շահադի մաքսատան : Շառառ գիւղի անասունները քշուած են և գիւղապետի գրագիրը սպաննուած է : Վաղտ մը զօրք զրկուեցաւ Շառառ : Կրիմայոյ թէ Քիւրտերը նոյնպէս երեւցած են Սատարաքի մօտերը, եւ ուրիշ 160 Քիւրտեր ալ ձուլֆայի սահմանէն անցեր են և շուտով անոնց ետեւէն ուրիշներ ալ պիտի գան : »

Այս խոսքեալ գաւառներուն մէջ կարգը վերահաստատելու համար կառավարութիւնը զրկուած է զօրավար Ալիխանով Ավարսքին, սա փեսան է Նախիջևանի քաղաքապետ Բահիմ

յնանին որ քաղաքին Հայերը խաբեց
ու թախարհեցին խաղաղութիւն
մատնեց :

Այս ամէնը բաւական է վարանցով-
ճաշքով փոխարքային խաղաղութիւն-
թեան անկեղծութիւնը կասկածի
առկ դնելու :

ԹՈՒՍԻՈՅ ԿՍՑՈՒԹԻՒՆԸ

(Շար. նախորդ թիւն եւ վերջ)

Բայց աւելի կառավարական «բար-
ձր շրջանակներուն» մէջ է որ անխի-
թանութիւնը եւ փոթութիւնը իրենց
գազաթնակէտին հասած են : Կայսրը,
բարի եւ մտադի, բայց կատարելապէս
գուրկ է հարկ եղած արեւելեան,
կը վարանի զինք շրջապատող հա-
կասական հազարաւոր ազդեցութեանց
միջեւ : Օր մը կուգէ խաղաղութիւն
կնքել մարդասիրաբար : Ուրիշ օր
մը ինքնին կապտաւոր հայրե-
նասիրութեան բորբոքած : Երէկ
կը յօժարէր բռնութիւն ի գործ դը-
նելու, այսօր ալ կը յօժարի չափա-
զանց զինդոլութիւններ ընելու : Վա-
ղը ինչ պիտի ուզէ : Ձը գիտցո-
ւիր : Եւ իւրաքանչիւր ոք իրեն
կաղաչէ եւ կը ձանձրացնէ իրեն-
մըն անկեղծ, երբեմն շահագիտական
խորհուրդներով : Կը նեղուի, կուլայ :
Շատ ծերացաւ : Իր տարիքը չառած
մագերը ճերմկեցան : Եւ ո՞վ կրնայ
զուշակել անոր վերապահուած փոր-
ձանքները :

Ասկէ քանի մը ամիս տուջ ներ-
քին գործոց նախարարութիւնը Մ.
Պուլիկինի յանձնուած էր : Սա ու-
ժի մարդ նկատուած էր, եւ մասնա-
ւորապէս ազատականներու համար
կասկածելի : Մինչդեռ, հաւ Մ. Պու-
լիկին, կայսրէն պատուէր ստացած
Սահմանադրութեան օրինագիծ մը
պատրաստելով, կուգայ ազատական
միջոցներ առաջարկել :

Բայց այն վայրկեանին՝ յորում Նի-
քոլա Բ. այս գիւցազնական որո-
շումը կուտար, կայսրութեան ամ-
բող ռուսիկանութեան բարձրագոյն
վարչութիւնը կը յանձնէր սոսկալի
Իրէքտֆին, պաշտօն մը որ մինչեւ ցարդ
Մ. Պուլիկինի յանձնուած էր : Պու-
լիկին բողոքեց եւ իր հրաժարա-
կանը առաւ, որ արդէն մերժուած
է Ձարէն : Ահա ուրեմն ներքին գոր-
ծոց նախարարութիւնը կը կառա-
վարուի երկու հակառակորդ եւ թշ-
նամի անձերէ :

Ասկէ քանի մը ամիս անց կը պատերազ-
մական նախարարութեանց մասին
եւ : Ալ աւելի հոս է որ կը
տիրապետէ անկապակցութիւնը ու
անխիթանութիւնը : Ամենամեծ պատիւ-
ները տրուեցան ծովակալ Սթարքին
որ յանցաւոր է Բօրթ—Արթուրի մեր
բոլոր ծովային ծախսերուն հա-
մար, եւ զօրավար Կրիստիանիին որ
փառ պատուաւորակով մը իր գիր-
քը թնամիին ձգեց ու ետ քա-
շուեցաւ : Ձօրավարներու պաշտօնա-
կողութիւնները շատ անգամ ապշե-
ցուցիչ կըլլան : Գալով սպաններուն
ասոնցը ալ աւելի տարօրինակ է :
Թնդանութեան վարժարանի շատ
մը աշակերտները հետեւով զօրաց
զուշեքներուն մէջ մտցուեցան : Ընդ-
հակառակը, հետեւակ զօրաց շատ
մը սպաներ յանկարծ մոցուեցան
Թնդանութեան խումբներուն մէջ :
Ահա գաղափար մը տրորդ անկարգու-
թեան մասին :

Հակառակ Թրեքտֆի ջանքերուն

բերանները գոցելու համար, մա-
մուլը սկսաւ լսելի ընել ամենակա-
խիտ բողոքներ : Այս օրերս մա-
մուլը հրապարակեց սոսկալի գայ-
թակղութիւններ, անանուն վատնու-
ման գործ մեծ արդէն գիտէինք,
բայց պարկեշտութեամբ չէինք ուզեր
անոնց մասին խօսիլ :

Խնդիրը հոս ծովային նախարա-
րութեան վրայ է, որուն բարձրա-
գոյն պետը եւ ինքնակալ տէրը մեծ
ղուք—Ալէքսան է : Սիրուն մարդ
թէեւ, բայց խիտ սկէպտիկ եւ
անտարբեր ամէն բանի, մեծ դուքս
մտիկ կընէր, անուշադիր կերպով,
իւր սպաններուն տեղեկագիրները, միշտ
իւր ուշադրութիւնը կեդրոնացնելով
այն թուղթէ թուղթներուն գործ կը
սիրէր շինել նոյն իսկ խորհրդակ-
ցութեան միջոցին : Եւ ահա թէ ինչ-
պէս անհետացաւ 40 միլիոնը ծո-
վային զբաղակցիւններէ, առանց կա-
րելի ըլլալու անոնց փոքր մէկ հեռ-
քը գտնել : Թէ ինչու մեր մարտկոց-
ներու զբաղակցիւնը գէշ տեսակէ էին,
մեր թնամիները հին եւ անգոր-
ծածելի, մեր պայթուցիկները գուրկ
պայթելու յատկութիւնէ : Ահաւա-
սիկ թէ ինչու համար Ռոֆտէսթ-
վէնսքի յօշուտուած ինկաւ իր
նաւին մէջ, ինչու համար ծովային
զինուորները ընկղմեցան իրենց նա-
ւերուն հետ, որոնք Ռուսիոյ յոյսը
եւ պատիւը կը կրէին :

Մանաւանդ անուն մը այսօր բո-
լորին բարկութիւնը կը գրգռէ,
այդ կայսեր մտերիմ Մ. Պէզօպրա-
զֆին : Այս անձը ողորդի պատերազմին
զլխաւոր հեղինակն է : Հակառակ
Գուրոբաթֆին ըրած ջանքերուն որ
արգիլէ, նա էր Ձարը պատերազմի
մղողը : Ան էր որ ստանձնել տուաւ
Արեւելքի փոխարքային, ծովակալ
Ալէքսանիին, այն բոլոր սխալները,
եւ բուն բառը ըսենք, Նիւթական գեղ-
ծութիւնը, որոնց բուն թելադրելը
ինք ըլլալ կը թուի : Նա ինքն էր
որ, խորհրդակցած քանի մը հրեայ
շահագէտներու հետ, ստեղծած էր այն
շահակցական ցաւալի ընկերութիւն-
ները, որոնք, հակառակ պայմանադը-
րութեանց, շահագործեցին Մանչու-
րիան եւ Կորէան : Եւ որ ներ-
մուծեց առաւել կամ նուազ խա-
ղախ գործակալներ նոյն իսկ բա-
նակին մէջ շահագործութիւնը ընելու
համար, նոյնպէս հանքերուն մէջ,
հակառակ Չինացեաց, Փոթացեաց եւ
Ճապոնացեաց բողոքներուն : Պատա-
րագմէն առաջ անոր արեւելք ճամ-
բորդութեանը մէջ, Կուրոբաթֆին փա-
ստեր ձեռք բերած էր այդ գայ-
թակղութեանց մասին : Պահանջած
էր այդ առաջակութեան ջնջումը,
Պարսպ ջանքեր (I) : Մէկ նոր հրո-
վարտակ մը վերահաստատեց Մ. Պէ-
զօպրազֆի այն բոլոր մենաշնորհ-
ները զորս Գուրոբաթֆին ջնջած էր :
Ճարտի համբերութիւնը հասաւ, մեր
վրայ յարձակեցաւ :

Այս յայտնութիւնները այսօր կը
հրապարակուին եւ ամբողջ Ռուսիոյ
մէջ ահալի յուզում յառաջ կը բե-
րեն : Կո՞ղք գիտնալ թէ ասոր
հետեւեալք ինչ պիտի ըլլայ : Թա-
ռաշխիայ Ազգ. Ժողովը գուհարուա-
ծին պէս պիտի վճռէ դատի տակ
առնել կայսեր նախարարները եւ
հաւանորէն զանոնք պիտի դատա-
պարէ ծանր պատիժներու : Ձարը
պիտի յօժարի : Նոր Կարոլոս Ա. մը
ըլլալ պիտի ու՞զէ, զոհելու Լօտը

եւ Սթոաֆօտը : Կամ բարեսրտու-
թեամբ պիտի ցանկալ զանոնք պաշտ-
պանել եւ արգիլել : Այս պարա-
գային մեծ հաւանականութիւն կայ
որ ժողովրդեան գերադրգոյնը նա-
խարարներէն աւելի անդին անցնի
եւ երթայ բաղխի մինչեւ Երկրի
վեհապետին :

Ա Յ Լ Ե Ի Ա Յ Լ Ք

ԱՊԻՏԻՆ ՓԱՇԱՆ ԵՊԱՐԺՈՍ

Արդէն հաղորդուեցաւ թէ Արչիպե-
ղաքոսի վալի Ապիտին փաշան Սուլ-
թանը Պոլիս կանչած է : Յունիս 9
թուականով Պոլսէն ստացուած նա-
մակ մը համաձայն, ընդհանուր կար-
ծիքը այն է որ Ապիտին փաշա եպար-
քոսութեան պաշտօնին կոչուի, Ֆէրիա
փաշային տեղ, որմէ Սուլթանը շատ
կը վախճայ որ պետական հարուած մը
տայ, քանի որ իր հիւանդութիւնը
ծանրանալէն ի վեր, Ֆէրիա փաշա
սկսած է հետեւիլ աւելի ժողովրդա-
կան ընթացքի մը քան թէ միապետա-
կան :

Ինչպէս Ֆէրիա փաշան, նոյնպէս
Ապիտինը Արչիպեղաքոսի մըն է եւ ատե-
նօք ալապալին գործոց նախարար ե-
ղած է : Գրական գործեր ալ ունի :
Իր ցեղակիցները առաջ քաշելու շատ
հետամուտ ըլլալուն պատճառաւ կը
կասկածուի թէ, եթէ եպարքոս ըլլայ,
կատարական պաշտօնատուները Ալ-
պանացիներով ողողէ :

Ապիտին փաշա Պոլիս հասնելէն ի
վեր ոչ ոքի այցելութիւն չէ տուած
եւ ոչ մէկին ալ այցելութիւնը ըն-
դունած է : Միախորտի Ռէֆիկ գլխա-
ւոր բաժնետէրերէն մէկն է ինք :

ԽԱՔԻՆԿԱՆ ԶԻՆԱՂԱՐ

Ս. Բեդերսպուրի 14 յունիս
Կրնամ կատարելապէս Ձեզ վստա-
հացնել թէ զինադադարի մը խնդրը
լրջօրէն մտածման առարկայ եղած է :
Պատերազմական եւ ծովային նախա-
րարութեանց մէջ ամէն տրամադրու-
թիւն ձեռք կանուցնելու ամբողջելու
նպատակաւ, թշնամական գործողու-
թեանց գաղբիւր միջոցին, ռուսա-
կան զէրքերը, այս կողմի սահմա-
նադրութիւններ զինուորական կարեւոր
տեղափոխութիւններ ընելու նոյնպէս
գնումներու եւ մթերքներ տեղա-
փոխելու համար :

Իրր ապահովութիւն անկեղծու-
թեան, որոշած են միայն իմարպիւրի
հարաւային եւ արեւելեան կողմերուն
մէջ անշարժ մնալու հաճութիւն տալ :
(Եթէ Ճապոնիք կլլեն : Դիտ. Խմբ.)
Այս տրամադրութիւնները որոնց
մանրամասնութիւնները կը յուսամ
կարենալ ի մօտոյ հաղորդել, ցոյց
կուտան բանակցութեան անստոյգ
լինելը :

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ

Ս. Բեդերսպուրի 12 յունիս
Մեծ գուքերը Պուլիկինէ առա-
ջարկուած խորհրդարանական ընդհ-
ժողովին կուսակից ըլլալ կը թուին :
Անոնցմէ մին իր մէկ մտերիմին
սպէս բացատրած է, Ըստ իրեն
«Ընդհանուր ժողովի մը գումարման
ի նպատակ իրենց որոշում տալուն
նպատակը այն է որ ժամանակ չա-
հին ամօթալի խաղաղութիւն մը կըն-

քելու պատասխանատուութիւնը այդ
ժողովին վրայ բեռնելու :

«Պալատը չը կրնար ինքնին ետ
կանչել յաղթուած բանակը, որով-
հետեւ այս պարագային կը վախ-
նայ մեծ ապստամբութեան մը : Բայց
եթէ Ընդհ. ժողովը խաղաղութիւն
չը քուէարկէ, պալատը ինքնին
ազգին կամքին ենթարկուած ըլլալ
պիտի ձեւացնէ :

«Թէ՛ խաղաղութիւնը եւ թէ Ընդհ.,
ժողովը եթէ չընդունէ ինք նոյնպէս
յեղափոխութեան երկիւղը մեծ էր :
Ուստի արքայական ցեղի կացու-
թիւնը փրկելու միակ կարելիու-
թիւնը կը կայանայ գործերը եր-
կարաձգելու մէջ մինչեւ Ընդհ. ժո-
ղովի գումարումը, այսինքն 2-3
ամսոյ շափ »

Դրամական զօրանք պատճառներ
կան մեծ դուքսերուն այս անստ-
կէտները ընդունելուն մէջ : Այս
եղանակով անոնք կը յուսան խու-
սափել կործանումէ մը որ շուրջ
150 միլիոն ֆրանքի կայսերական տուն
եկամուաները գրաման, պիտի եւ-
թարկէր : արդ եկամուաները պիտի
կորսուէին ապստամբութեամբ ձեռք
բերուելիք վերակազմութեան մը մէջ :
Ուստի կը նախընտրեն սկզբունքե-
րու առջեւ խոնարհիլ շահերին փըր-
կելու համար :

Գ. ԼՕՌՕՐԷԼԷՆ

Թ Ղ Թ Ա Վ Ց Ո Ւ Թ Ի Ն

Փ. Պոլիս 13 յունիս 1905

Դերասան Պ. Կարապետ Գայֆահան
երէկ գիշեր «Լիւքսէնպուրկ» թատրո-
նին մէջ յաջողութեամբ ներկայա-
ցուց Համլէթը : Իրեն հետ կը խա-
ղար Փ. Պոլսոյ երգ. Թատերասերներու
խումբը : Օթեակները բոլորը յանուած
էին, թատրոնը պարագայ տեղ չկար :
Ներկայ գտնուող Պուլիկար գերասան-
ները եւ գերասանուհի մը Սֆիւայի
խաւաքէն գացին զինքը շնորհաւո-
րելու : Տեղական երգ. թատերասեր
խումբի կողմէն նուիրուեցաւ ծաղկեայ
պսակ մը, որ երիտասարդ մը ժո-
ղովրդին մէջէն բերաւ եւ տուաւ :
Իրր Համլէթ իր մօ ը հետ ունեցած
տեսակցութեան վերջը օթեակներէն
ծաղկեփունջիկ նետեցին բեմին վրայ :
Այս բոլորը ըսելէս յետոյ պէտք
է աւելցնեմ, որ վաճառական դասա-
կարգը իր հիացումը յայտնեց միայն
առատ ծափահարութեամբ :

Կիմանանք, որ պիտի Գայֆահան
մտադիր է նաեւ Պուլիկարի ուրիշ
քաղաքները այցելել :

Յաջողութիւն կը մարթնէք իրեն :
Գ. Գ.

ՊԱՐՏԵՉ ՐԻՆԱ

«Նստե՛ժտա» հայ դերս. խումբս այս
գիշերուէն իր ամառային շրջանը
կը սկսի եւ իւր ներկայացումներուն
աւելի փայլ մը տալու նպատակաւ
կը գործակցի նորեկ աշխարհածանօթ
նոր մէթոտով ձեռնածու պ. Սթէֆան
Անտոնով եւ տեսակ տեսակ կենդա-
նիներու թատերական խմբապետ Պ.
Տօնիճէթի հետ : պ. Սթէֆան ձեռնա-
ծու մագնիսական զօրութեանց հե-
տադրուիլ եւ օգային երեւոյթներու
եւ գերբնականական ուրուանկարներու
պարզապէս հմայող թիւ գիշ ժըն է, իսկ
Տօնիճէթի իւր 50է աւելի անասուն-

ներով անհրաժեշտ խաղեր եւ քանի թոմարներ պիտ ներկայացնէ, հոյնական բոժոժիկեան մուգիքով 50 երաժշտաց փոխարէն սքանչելի օրէրէթի կտորներ պիտի նուագէ :

Օրդ . Բաթինա նոր երգերով եւ պարերով կը խոստանայ ներկայանալ թատերասէր ժողովրդեան : Ի վերջոյ Հայ գերա . խուճապ պիտի ներկայացնէ «Անպրամ մարդն զիսկ մըն է անկենդան» անուէն խիստ ծիծաղաշարժ երկու արար կատակերգութիւնը : Վաղը երեկոյ նոր բրօկրամ :

Հայ դերու . խումբ

ՀԱՎԱՏՈՒՄ

Տ Ա Խ Ի Լ Ի Է

Շէհրիմիզ ասքերիյէ գումանտանը զընտան պէլէտիյէլէրէ խիթապ պիր թէգքէրէ՝ էճնէպի թապալը օլան կէնճիլէրին իսիմլէրի նիւֆիւս տէֆթէրլէրինէ գայտ օլընտըլընտան աօլայը էնվայի պօշ մէշղուլիյէթ վէ գօնսօլոսհանէլէր իլէ միւճատէլէլէր զուհուրա կէլմէքտէ օլտըլընտան պահս խտէրէք՝ պուռտան սօնրա բառաթօրթլարընը եահօտ րէսմիլ քեաղըտլարը էլլէրինտէ օլան էճնէպի թապալըլարըն խիմլէրի նիւֆիւս տէֆթէրլէրինէ՝ պուլկար թապալարը կիպիլ գայտ օլընտմասընը թէնպիս իթմիշ տիր :

Պու խուսուստան աօլայը շէհրիմիզ պէլէտիյէսի պիր իլաննամէ նէշր խտէրէք, Վարնատու միւթէմէքին օլան վէ 18 տէն 25 եաշընտա պուլընան էճնէպի թապալը կէնճիլէր իշպու ալըն 25-ինէ գատար՝ բառաթօրթլարընը, եահօտ թէգքէրէ վէ եա համիտիյէլէրինի պէլէտիյէյէ կէօթիւրուպ նէ թապալարը պուլընտըլարընը իսպաթա մէճպուր օլտըլարընը իլան ու իսթար իթմիշ տիր : Մէշղուլ միւտտէթ զարֆընտա էճնէպի թապալարը օլտըլարընը իսպաթ իթմիշէյէլէր, մէշղուլ իլլաննամէ հիւք միւնճէ, պուլկար թապալարը տէֆթէրինէ գայտ օլընտարա, օնտան սօնրա իսթիտալարը սէմէրէսիզ գալաճագ վէ ասքէր սիլքիւնէ գայտ խիլէճէք տիրլէր :

Սուլթանըն սօքաճըլարը էլլինտէն ճանլարընը գուրթարմազ իշիւն՝ պաշլարը աշըգ քէնտիլէրինի րասթ կէլէն վաթօրա աթարազ Պուլկարիայա իլթիճա իթմիշ օլան պիր թապըմ կէնճ միլլէթտաշլարըմըլըն հէր հալտէ միւթթէսնա թուլթուլմալարը իգթիզա խտէր իսէտէ, նիհայէթ էլտէ պարի պիր «իգամէթ թէսքէրէսի պուլընմասը էլլէմ կէօրիւնիյօր :

Պու իգամէթ թէսքէրէսիւնի ալմագ իշիւն մահէլին թիւրք թիւճար վէքեալէթիւնէ եա պիր Համիտիյէ, եալսօտ պիր բասաթօրթ իպրազ իթմէք վէ 10 ֆր :

էօտէմէք իգթիզա խտէր : Փագաթ Համիտիյէսի վէ բասաթօրթ օլմայանլար նէ՝ եաբաշլարասըլ մէսէլէ պու նօգթատա տըր : Իշլէ պու նօգթայը տըգգաթա ալարագ կէշէնլէրտէ թաղիւրհուրդըն նազարընը տալէթ իթմիշ իտիք : Թաղալան ազալարընտան պաղըլարը լազըմ կէլէն միւրաճաթա հաղըր օլտըգլարընը պիղէ սէօյլէմիշ իտիլէր : Փագաթ միւրաճաթա իթմիշ մի . վէ նէ՝ սէմէրէ հասըլ օլտու, էլան պիղէ թէֆհիմ օլընմամըլ տըր :

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

Սթանպօլ 14 յունիս

Ըսեան րէյիսի Մահմուտ Եահաշէրան խալիֆէ գապուլ օլընմագտա տըր : Հիճաղ տալի Ֆիյզի բաշանըն կիթմէսինտէն պէրու ասըլար թարաֆընա տէօնմէքտէ տիր : Ֆէյզի բաշանըն Մանահատա 38000 ասքէրի վար իսէտէ, Սանապը գուրթարա՝ մայաճագ տըր : զիրա 8,0000 պէտէվին օրասընը իշլալ իթմիշէր տիր :

Ասիրտէ տալի վահապիլէր ալագլանմըլ օլուպ, կիթմիքճէ հալ աղըրլաշիյօր : Սուլթան էրզինկիան օրտուսընը օրայա եօլլալաճագ տըր : Իքի թիւրք վաթօրթը ասքէրէ տօլու Սթանպօլտան կէշտիլէր : Ասիրտէ հալ րէք սըճագ օլմաղլէ, տէօրտիւնճի օրտուսըն ասքէրի թահամիլ իտէմէյօր, քէզա Եէմէնտէ, Խալիֆէլիկ մէսէլէրինտէն տօլայը իքի թարաֆտան պաշլանան մուխապէրաթ սէմէրէսիզ գալտը : Հալա սըճագլըլը միւսատէ իթմէսինտէ գալկա պաշլալաճագ տըր :

Ասիրտէն միւթթաճէլ իմտատ իսթէնիլիյօր զիրա Հիճաղա եաղըն բաթիթաթ Նաբուս վէ Հայֆա շէհրիլէրի մուհասէրէ օլընմըլաը տըր : Պապը Ալի տէրհալ ասքէր եօլլանըմասընա գալար վէրտի :

Բ Ո Ւ Ս Ի Ա

ԻՍԼԱՄ ՃԱՆԱՎԱՐԼՐԳԻԱՐ

Էվրոքա ճէրիտէլէրինտէ կէօրիւնէն թէլէկրաֆ վէ մէքթուպ հալաթիտաթը Գալկասիտա Նախիճէվանտա վէ ճիվար գաղալարընտա իսլամլարըն էրմէնիլէրէ գարը զատտարըլըլարը վահշի ճանալարըլը տէրէճէլէրինէ չըգմըլ տըր : Թաթարլար էրմէնի էլլէրինի վէ տիւքեանլարը եաղմա իթմիքտէն սօնրա եաղմըլար հայվանաթը սիւրիւպ կէօթիւրմիշլէր : քիլիսէլէրի վէ մէքթէպլէրի եաղմայա վէրմէքտէն մատա մուգատտէն էշեալարը վէ թալսիլէրի րիսէմիշլէր վէ գը :

րուպ մահվ իթմիշլէր :

Պուտամիա քէօյիւնտէ 800 խրիսթիանլարա վէ պիր բաբասա ճէպրէն իսլամիյէթի գապուլ իթմիքտէն սօնրա սագալընը թըրաշ իթմիշլէր : 11 չօճուգլարըն ըրզընա կէշմիշլէր : քիլիսէի ճամիէ թահվիլ իթմիշլէր : ճալկրախ նամ քէօյաէ էրմէնի գարըլարը թուլթուպ գօճալարընը վէ չօճուգլարընը կէօլլէրի էօնիւնտէ ըրզլարընա կէշմիշլէր : 37 էրքէք թուլթուպ գէվճէլէրի վէ էվլաուլարըն էօնիւնտէ գաթալարընը քէսմիշլէր : Իսլամլարըն պուվահշիլէրլէրինի եաղան եալընըլ էրմէնի կաղէթալարըն տէկիլ տիրլէր : տահա զիյատէ Սուլթան Համիտին սէվկիլիսի օլան էնտէքսանտալու Բուսէն կիպի էրմէնիլէրէ տիւշման օլան կաղէթալար տըր : Իշպու վահշիլէրլէրին էօնիւնիւ ալմագ իշիւն րէրէնա Լուի Նաբօլէտն թիֆլիստէն եօլա չըգմըլ տըր :

Թիւրք սիւնօրընտան Բիւրալէր Կալկասիայա կէշուպ թաթարլարա շէրիք օլմագտա տըրլար : 70 80 քիշիլէք պիր էրմէնի չէթասը իքի քէօյ վէ մանաստըր գուրթարմըլ վէ վահշի տիւշմանը տալընտըլ :

Սարաթալ վիլայէթիւնտէ գըլթըլը պաշլալմըլ օլմաղլէ, գանլը գարըլըլըլըլար վոդուպուլմագտա տըր :

Օտեսա իսթիլալընտա ասքէրիյէ բարմաղը վար զանն օլընըյօր : Թէլէֆիլաթ րէք չօգ տէյօրլար :

Օտեսատա յունիս 14 տէ գարըլըլըլըլըլ զուհուրա կէլուպ, ժանտարմա գապիթլէրինտէն վէ գաղալարտան 8-10 քիշի թէլէֆ օլընտըլար : Կիճէ գարըլըլըլըլ տէվլամլէ շէհրին պիր չօգ մահէլլէրինէ սիյայէթ իթմիշ տիր : Պէօյիլէլ քիլիսէն էօնիւնտէ պիր պօմպա աթըլուպ պիր գաշ քիշի եարէլէնմիշ տիր : Բէթթօրալլօսք պէօյիլէլ բիւցասընըն պիւթիւն տիւքեանլարը գաբանմըլ տըր : Բօյիսլէր գըլըմ վէ րէվօլ վէր էլլէրինտէ սօլաշմագտա տըրլար : Թըրանվայ վէ թէլէկըրաֆ մուխապէրաթը քէսիլմիշ տիր : եարըն կաղէթալար չըգմայաճագ : Սօգալարտա հիշ պիր ասքէր կէօրիւնմէյօր :

Ամիրալ Նէպօկաթով քէնտի մայէթ գապիթլէրի իլէ պէրապէր թահիթը մուհաքէմէյէլալընաճագ տըրլար :

Օտեսա—Եանկըն սէպէպի իլէ րէք չօգ խասարաթ օլմուշ տըր : Միւսատէմէ էհալի վէ բօլիսլէր վէ գաղալար պէյնիտէ տէվլամ իթմէքտէ, իլիման ասքէրլէրլէ իհալթ օլընմըլ : մուխապէրաթ քէսիլմիշ :

Բէթթէրպուրկ—Ամիրալ Չէխնին Սէվաստաբօլա կիտէրէք, Օտեսա վաթօրլարընը մուհապալ իթմէք իշիւն Գարատէնիզ տօնանմաը իլէ օբայա կիտէճէք, զիրա պահրիէ ասքէրլէրին պիր գըմըլը ըսեանտա տըր :

ՍՕՆ ԹԵԼԵԿՐԱԳՐԱՐ

Օտեսա 17 յունիս— Պու կիճէ էգաթէրինա սանէմիւնէ եաղըն աթըլան պիր պօմպա իքի խաղախ եարէլէտի : Սիւահլը իշիւնիլէր իլիման իտարէխանէսինէ հիւճուլէ հէր շէյի գըրուպ կէշիւրտիքտէն մատա էշեա վէ մալլէրի եաղմա իթմիլէր : Պու թիւն իլիման իշլէրի թաթիլ օլընմըլ տըր : Պու գարըլըլըլըլ իլիմանտա պուլընան պիւթիւն վաթօրլարա սերայէթ իտէր տէյու գօրգու վար տըր : Իլիման գօլճըլարտան պիրի գաթիլ օլընտը : Գարըլըլըլըլ տէվլամ իթմէքտէ, վալի ասայիշին իպգասը իշիւն ասքէրիյէ գօմանտանլըլընա միւրաճաթ իթմի : —Պերլին 17 յունիս— Պրանսըլ էլլիսի տիւնվէլա րէյիսի Մ . Պիւլօմտան գապուլ օլընուպ, Պրանսա հիւքիւմէթի Մարոք մէսէլէսի իշիւն գօնթէրանսը մէպտէն գապուլ իթմիկիւնի պէյան էլլէմիշ տէյօրլար :

Պուտաքէլթ 17 յունիս—Սէմօնի վէ վէթլթիւն գաղալարընա աս քէօյիլ իսթիլալը պաշլատը վէ պիր թագըմ մուգաթէլլէլըսպտնոթիւն լուգու պուլարընտան, հիւքիւմէթ գուլվէի ասքէրիյէի իմտատա տալէթ իթմիշ տիր : —Պաթուլ 17 յունիս— Իշիլէրին իսթիլալը սէպէպլէրօշիլտ վէ Մանիաշլմ ֆապրիգալարը իշլէրինի օրատան գաղտըրուպ իսքէնտէրիէյէ վէ ըթթանպօլա նաղ իթմէքտէ տիրլէր : պու սէպէպլէ 8000 քիշի սէնէտէ 2 միլիոն րուպլի մըգտարընտա իրատ վէ մաաշլարընտան մահրում օլիյօրլար :

Նիքօլայէվ 17 յունիս— Տիւն ժանտարմա գօմանտանը վէ գաղալար էհալի տաղըլմագ իշիւն գանտըրմայա չալըլըր իքէն պիր պօմպա աթըլուպ, 4 քիշի թէլէֆ իթմի :

Վարշաւա—Բօլիս միւթէթիլի րէվօլլէր իլէ գաթիլ օլընտը :

Լիպաու—Իսթիլալ գալուր իթմի, վէ թէսքիւնի 60 րնճը գալէնին մուհաֆըլը վասիթասը իլէ միւմքին օլապիլէճէք տիր :

Բարիզ—Թուսըն ֆրանսըլ հիւքիւմէթի իքի ալման խաֆիյէլէրի տէրտէսթ իթմի, անլէրտէն պիրի խաֆիէն գալէնին րէսմիւնի ալմագտա իտի :

Սթանպօլ—Թիւրք տալիէլէրինտէ Արապ իսթիլալընը թէսքիւնի մէմուլ իթմէքտէ տիրլէր : Սուլթան Եէմէնի 4 վիւլայէթէ թագսիլմէ Արապ վալիլէր Եէտի իլէ իտարէ իթմէք էֆքեարընտա տըր :

Իշպու յունիս ալըն խիթա՝ մընա գատար պօրճարընը էօտէմէյէն ապօնէլէրիպէ կաղէթա կէօնտէրմէյէճէյիլ :

Одговорились А. Курбетянцъ печатница П. Гаушкова и С.не -Варна